ՆԱԽԱԲԱՆ

Այս ձեռնարկի անհրաժեշտությունը պայմանավորված է բնական գազի մատակարարման, այդ ոլորտում ծառայությունների իրականացման յուրահատկություններ, վերջին տարիներին ոլորտում իրականացված գործընթացների լուսաբանման, գազամատակարարման և գազասպառման համակարգերի անվտանգ շահագործմանն ուղղված միջոցառումների ներկայացման նկատառումներով:

Ձեռնարկը կարող է օգտակար լինել բնական գազի ոլորտում գործունեություն իրականացնող ցանկացած կազմակերպության, ֆիզիկական և իրավաբանական անձ սպառողների, պետական և տեղական կառավարման համակարգերի պատասխանատուների, նաև հասարակական կազմակերպությունների համար:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Անվտանգությունը գազի տնտեսությունում, մասնավորապես՝ ներտնային գազասպառման համակարգերում, կարևորագույն հիմնախնդիր է, որը հուզում է ինչպես հանրությանը, այնպես էլ երկրի իշխանություններին, ինչպես նաև ՀՀ-ում գործող միակ գազամատակարար ընկերությանը՝ «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ին:

Էներգետիկայի բնագավառում պետական քաղաքականության առաջնային սկզբունքը, դա մրցակցության խթանման ու մրցակցային միջավայրի համար անհրաժեշտ պայմանների ստեղծումն է: Կարծում եմ, որ այս խնդրի լուծմանը զուգահեռ, երբ բնագավառը կդառնա հանրության համար ավելի թափանցիկ, իսկ պետության համար ավելի հեշտ վերահսկելի, գործուն մեխանիզմներ կստեղծվեն առավելագույնս ապահովելու վերոնշյալ քաղաքականության այնպիսի կարևորագույն սկզբունք, ինչպիսին էներգետիկայի բնագավառի անվտանգությունն է: Եվ սա, առավելապես, վերաբերվում է գազի տնտեսությանը, որտեղ սկսած 2001թ.-ից «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ն իրականացնում է լայնածավալ գազիֆկացման աշխատանքներ: Այս պահի դրությամբ հանրապետության շուրջ 610 հազ. տբտեսություններ արդեն փաստացի գազասպառողներ են: Այս ընթացքում ավելի քան հրատապ է եղել և կա գազի անվտանգության հիմնախնդիրը: Դժբախտաբար վիճակագրությունը խոսում է այն մասին, որ չնայած պետական մարմինների և «ՀայՌուսգազարդ»-ի կողմից ձեռնարկված մի շարք միջոցառումների՝ ուղղված գազից

օգտվողների անվտանգության ապահովմանը, այդ հարցում դժվար է տեսնել որևէ առաջընթաց:

Այս ձեռնարկը նպատակ է հետապնդում բարձրացնելու բնակչության, առաջին հերթին գազասպառողների տեղեկացվածությունը գազի օգտագործման անվտանգության, գազասպառող սարքավորումները շահագործելու և սպասարկելու կանոններին, առաջացած վթարների և անցանկալի պատահարների հետևանքների վերացմանն ուղղված պարտադիր իրականացվող գործողություններին, ինչպես նաև այդ հարցերում նրանց և ծառայություններ մատուցող կազմակերպության իրավունքներին և պարտականություններին:

Ձեռնարկը կարող է օգտակար լինել, նաև գազասպառման ներտնային համակարգերի տեխնիկական սպասարկմամբ զբաղվող Էյ-Ի-Ջի սերվիս ընկերության մասնագետների և աշխատողների համար:

Ոլորտը կարգավորող մարմնի կողմից ընդունված գազամատակարարման և օգտագործման նոր կանոնների մասին սպառողների և շահագործող կազմակերպությունների աշխատակիցների անտեղյակությունը և անվտանգության նորմերի խախտումները չեն կարող ապահովել գազի վթարների կանխումը: Դրա համար անհրաժեշտ է բարձրացնել համապատասխան տեղեկատվության մատչելիությունը, ապահովել այն վթարների կանխումը, որոնք պայմանավորված են իրազեկության պակասի հետ:

Գազի ոլորտի իրազեկության ապահովման ամենամեծ գրավականը այդ գործընթացին հասարակության ակտիվ մասնակցությունն է:

Որպես հիմնական նպատակ կարելի է նշել Հայաստանում գազամատակարարման համակարգի անվտանգության բարձրացումը՝ մատակարարների ու սպառողների իրավունքների ու պարտականությունների քարոզման, հասարակական կազմակեպությունների, տեղական իշխանությունների ներգրավման և առավել ակտիվ մասնակցության միջոցով:

Իրավիճակի ընդհանուր նկարագրություն

Գազաբաշխիչ ընկերության տրամադրած վիճակագրության համաձայն՝ գազի հետ կապված մահացու ելքով վթարների մեծ մասը տեղի է ունենում մարզերում, հատկապես ձմեռային սեզոնի ընթացքում: Եթե Երևանի սպառողներն ու բնակչությունը ինչ-ինչ ձևերով տեղեկացված են իրենց և մատակարարող ընկերության իրավունքների ու պարտականությունների մասին և գիտեն, թե ինչպես պետք է ապահովել անվտանգությունը ներտնային գազամատակարարման համակարգերում, ապա մարզերի բնակիչներն ու

սպառողները լիարժեք կերպով չեն ստանում այդ տեղեկատվությունը և ուշադրությունից դուրս են մնում:

Ստորև ներկայացվում է մի վիճակագրություն գազի անվտանգության խնդիրն ավելի ճիշտ պատկերացնելու համար՝

2003թ. 185690 բաժանորդ, 8 դեպք, 8 մահ,

2004թ. 268316 բաժանորդ, 17 դեպք, 25 մահ

2005թ. 360637 բաժանորդ, 12 դեպք, 15 մահ

Այդ իսկ պատճառով գազի ծառայությունների մատուցման գործում անվտանգության ապահովումը համարվում է ամենակարևոր խնդիրներից մեկը: Այդ կարևորագույն խնդիրը կարիք ունի կարգավորման:

Բնական գազի անվտանգության խնդիրները խիստ կարևոր են, սակայն հաճախ անտեսվում են ինչպես սպառողների, այնպես էլ մատակարարող կազմակերպության կողմից, որը պատասխանատու է ապահովել համակարգի անվտանգությունն ու բնական գազի օգտագործման ապահովությունը:

Գազի մատակարարման և օգտագործման կանոնների չիմանալը, դրա վերաբերյալ իրազեկության պակասը, անվտանգության կանոնների խախտումները կարող են հանգեցնել վթարների, պայթյունների, մարդկային զոհերի, նյութական վնասի և այլն:

Օրինակ՝ եթե ժամանակին չվճարվի օգտագործված գազի գումարը, դրանից ոչ մեկը էապես չի տուժի, արդյունքում կարող են դադարեցնել գազամատակարարումը, իսկ գազի անվտանգության կանոնների պահանջները չպահպանելու դեպքում հնարավոր են նյութական և մարդկային կորուստներ: Մեկ օրինակ ևս, եթե սպառողին թույլ է տրվել օգտագործել միայն գազօջախ, ապա արգելվում է գազօջախով ջեռուցել բնակարանը: Ինչու՞, որովհետև բնական գազի այրումից առաջանում է շմոլ գազ, իսկ բնակարանում շմոլ գազի 0.4-0.5% առկայության դեպքում 10-15 րոպեի ընթացքում մարդը մահացու թունավորվում է: Այս և նմանատիպ դեպքերից խուսափելու համար համապատասխան մարմինները մշակել են մի շարք անվտանգության կանոններ, որոնց հիմնական նպատակն է ապահովել մարդու անվտանգությունը:

Վերը նկարագրվածը հիմք է տալիս մտածելու, թե ի՞նչ հետևանք կարող է առաջացնել գազի անվտանգության կանոններին չհետևելը և ու՞մ համար է սպառնալիք գազի պայթյունը՝

Այդ դեպքում՝

Ինչպես կազմակերպել գազամատակարարման

ծառայությունների մատուցման անվտանգությունը:

Գազամատակարարման ծառայությունների մատուցման անվտանգությունը ապահովելու համար պետք է հասնել անվտանգության համար պատասխանատու բոլոր կողմերի պարտականությունների լիարժեք կատարմանը:

Գազի անվտանգության հարցերում հասարակության մասնակցությունը նշանակում է շարունակական համագործակցության հաստատում կառավարության, ՀԾԿՀ-ի և «ՀայՌուսգազարդ»-ի միջև ներտնային գազամատակարարման համակարգի տեխնիկական սպասարկման և գազի անվտանգությունը բարձրացնող որոշումների ընդունման հարցերում, ինչպես նաև այդ որոշումների մասին տեղեկատվության պատշաճ տարածման հարցերում: Հասարակության մասնակցությունը նշանակում է նաև ՀԾԿՀ-ի գործունեության թափանցիկություն և հաշրության իրազեկություն իր իրավունքների ու պարտականությունների մասին:

Սպառողներն ու բնակչությունը չեն կարող ներգրավվել համագործակցության մեջ կառավարության, ՀԾԿՀ-ի և «Հայռուսգազարդ»-ի հետ, եթե չիմանան իրենց իրավունքներն ու իրավասու չզգան այդպես վարվելու: Ավելին, համագործակցելու և առկա տեղեկատվությունը տարածելու խրախուսումը կօգնի մատակարարներին, ՀԾԿՀ-ին և այլ հանրային կառույցներին՝ ապահովելու գազամատակարարման համակարգի անվտանգությունն ու արդյունավետությունը և դրանով իսկ ծառայելու հասարակության շահերին: Թափանցիկությունը, հաշվետվողականությունն ու տեղեկատվության տարածումը կբարելավի կոմունալ ծառայությունների ոլորտի գործունեությունը և կհզորացնի քաղաքացիական հասարակությունը:

Հաշվի առնելով գազի մատակարարման ծառայության բնույթը, բնական գազի բոլոր սպառողներին՝ հատկապես կենցաղային սպառողներին կարելի է համարել շահագրգիռ անձինք: Գազամատակարար կազմակերպության թափանցիկ և հաշվետու աշխատանքն իր ազդեցությունն ունի յուրաքանչյուր սպառողի վրա: Առանց էներգետիկ անվտանգության և գազաբաշխող ընկերության իրավունքների ու պարտականությունների մասին քաջատեղյակության ծառայություն մատուցող կազմակերպությունը չի կարող լավ սպասարկել իր բաժանորդներին՝ միևնույն ժամանակ գանձելով հատուկ սակագին ներտնային գազային ցանցը ստուգելու և դրա անվտանգությունն ապահովելու համար: Դրա արդյունքը լինում են պայթյունները, գազից և ածխածնի մոնոքսիդից թունավորումները, որոնք հանգեցնում են վնասվածքների և նույնիսկ մարդկային զոհերի:

ՀՊՄ-ն հուսով է, որ եթե բնակչությունը տեղյակ լինի իր իրավունքներից և ակտիվություն ցուցաբերի, ապա գազի ընկերությունը և ՀԾԿՀ-ն առավել համագործակից կդառնան տեղեկատվության փոխանակման հարցում, ինչպես նաև առավել հաշվետու՝ սպառողների կարիքներն ու պահանջները բավարարելու գործում:

Գազամատակարարման ծառայությունների մատուցման անվտանգությունը լիարժեք ապահովելու համար ստեղծել շահագրգիռ կողմերի համագործակցություն՝ իրականացնելով անվտանգության վերաբերյալ ուսուցում և իրազեկման քարոզարշավ:

Գազի անվտանգության ապահովման համար պարտավորություններ ունեցող կողմերը

Գազի շահագործման ժամանակ անվտանգության ապահովման համար պատասխանատու կողմերն են՝ ՀՀ Կառավարությունը, Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, մատակարարը և գազ օգտագործողը:

Այս չորս կողմերն էլ ունեն պարտավորություններ գազի համակարգի անվտանգության համար, բնականաբար սպառողը որպես անմիջական գազ օգտագործող, մատակարարը որպես գազամատակարարող, համակարգի շահագործող և անվտանգությունն ապահովող կողմ և անվտանգության պատասխանատու, իսկ ՀԾԿՀ-ն և կառավարությունն էլ որպես վերահսկող, կանոնակարգող և կարգավորող: Յուրաքանչյուր կողմն իր հերթին ապահովելով իր վրա դրված պարտականությունների կատարումը կբերի անվտանգության հուսալիության բարձրացմանը:

ՀՀ Կառավարություն

Առաջին հայացքից կարող է թվալ, թե ՀՀ Կառավարությունն ի՞նչ պետք է անի, որպես գազամատակարարման անվտանգությունն ապահովող կողմ և ո՞րն է նրա դերը: Նրա դերը սահմանված է հենց «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքով՝ էներգետիկայի բնագավառում պետական քաղաքականության հիմնական սկզբունքներից մեկը՝ հոդված 5-ը, հենց էներգետիկայի բնագավառի անվտանգության ապահովումն է:

Բնական է որ գազասպառման համակարգի հուսալիությունը և բնականոն գործունեությունը սերտորեն կապված է էներգետիկական շուկաներում ծառայությունների

ձեւավորման և զարգացման հետ: Այս ոլորտում կառավարության դերը իրազեկման առումով մեծ է, քանի որ հիմնական փաստաթղթերը, որոնք վերաբերվում են անվտանգությանը և որոշակի առումով սոցիալական հարց են լուծում, մշակվում և հաստատվում են կառավարության կողմից: Օրինակները բազմաթիվ են և խոսուն, միայն վերջերս կառավարությունը որոշել է, որ մինչև 2011 թվականը շահագործումից պետք է հանվեն բոլոր այն գազասարքերը, որոնք չունեն ավտոմատ անջատիչ: Այս մասին կարելի է ասել, որ համարյա ոչ ոք տեղյակ չէ, և հիմա շատ սպառողներ գազասարք գնելիս հաշվի չեն առնում, որ այդ սարքերը չունեն ավտոմատ անջատիչ: Իսկ այս և նմանատիպ որոշումների իրազեկումը մարզերում պետք է իրականացնի մարզպետարանը, որն էլ հենց կառավարության ներկայացուցիչն է մարզերում:

Հաշվի առնելով, որ գազամատակարարման պրոցեսը էներգետիկայի բնագավառ է, ուստի այն պահանջում է անվտանգության ապահովման համար իրականացնել մի շարք միջոցառումներ.

- **Իրավական դաշտ**
  - **«Անվտանգության կանոնները գազի տնտեսությունում»**
  - **Տեխնիկական սպասարկում**

ՀԾԿՀ՝

Հանրային Ծառայությունները Կարգավորող Հանձնաժողով

Հանրային Ծառայությունները Կարգավորող Հանձնաժողով

Գազամատակարարումը լինելով բնական մենաշնորհ կարգավորվում է Հանրային Ծառայությունները Կարգավորող Հանձնաժողովի (ՀԾԿՀ) կողմից: ՀԾԿՀ-ի նպատակն է հավասարակշռել սպառողների և հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերը:

ՀԾԿՀ պարտավորություններից է նաև սպառողների անվտանգ գազամատակարարման ապահովումը, ուստի կարգավորողը մեծ պատասխանատվություն է կրում համակարգի անվտանգության համար: Որպես հավասարակշռող մարմին նրա պարտավորություններից է նաև ոլորտի վերաբերյալ քաղաքացիներին իրազեկման խնդիրները, որոնք նա պետք է իրականացնի իր ինտերնետ կայքի միջոցով (www.psrc.am):

ՀԾԿՀ-ն կարգավորում է դաշտը իրականացնելով մի շարք գործառույթներ՝

Լիցենզավորում կամ թույլտվություն-

Ծառայության որակ և ծառայությունների մատուցման սակագներ-

Ներդրումային ծրագրեր-

«Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնները»

ԳԱԶ ՕԳՏԱԳՈՐԾՈՂ

Ի՞նչ պետք է անի գազ օգտագործողն իր անվտանգությունն ապահովելու համար

Բնական գազի անվտանգությանը վերաբերվող յուրաքանչյուր կանոն հիմք է ծառայում, որ սպառողներն իրենց սեփական անվտանգության ապահովման համար հետևեն կանոնների պահանջներին և անվերապահորեն կատարեն դրանք: Ամեն դեպքում մատակարարն ինքն է կրում պատասխանատվություն յուրաքանչյուր տիպի վթարների համար, այդ նպատակով էլ կանոնների մի մասի իրագործումը սպառողի կողմից վերահսկում է մատակարարը կամ նրա կողմից լիազորված անձը:

Որպեսզի սպառողը ապահովի իր անվտանգությունը պարտավոր է կատարել հետևյալը.

- ✓ **Օգտվել միայն գազաֆիկացման նախագծով նախատեսված գործարանային արտադրության գազասարքերից-**
- ✓ **Օգտագործել գազասարքերն իրենց նպատակին համապատասխան**
- ✓ **Շինության մեջ գազի հոտի հայտնվելու դեպքում անմիջապես դադարեցնել գազի սարքավորումից օգտվելը, բացել պատուհանները՝ շինության օդափոխման համար, կանչել վթարային կազմակերպությանը, կրակ չվառել, չծխել, չմիացնել և չանջատել էլեկտրալուսավորիչները և էլէկտրական սարքավորումները, չօգտագործել էլեկտրական զանգերը, ստուգել, թե արդյոք փակ են գազի սարքավորումների բոլոր ծորակները-**
- ✓ **Գազի սարքերի տեղաշարժումը կատարել միայն գազամատակարարող կազմակերպության կողմից-**

Գազ օգտագործողի պարտականությունները սահմանված են նաև գազամատակարարման և օգտագործման կանոններով, համաձայն որի՝

Գազ օգտագործողը պարտավոր է գազասպառման համակարգի օգտագործման ընթացքում պահպանել տեխնիկական կանոնակարգերով սահմանված անվտանգության

պահանջները և գազօգտագործող սարքավորման օգտագործման անվտանգության կանոնները՝ համաձայն Պայմանագրի, ԳՄՕԿ-ի և գազօգտագործող սարքավորման գործարանային անձնագրի (շահագործման հրահանգի) պահանջների:

Գազ օգտագործողը պարտավոր է նաև պահանջել գազամատակարար կամ գազի ներտնային համակարգը սպասարկող կազմակերպությունից իրականացնելու գազի անվտանգության ապահովմանն առնչվող վերը նշված բոլոր գործողությունները:

Գազասպառման համակարգի հավաքակցման և օգտագործման ընթացքում արգելվում է.

- կատարել գազաբողարկման կատարողական-տեխնիկական փաստաթղթերին և նախագծին չհամապատասխանող միացումներ և փոփոխություններ,
- գազը սպառել գազասպառման համակարգի անսարքության դեպքում,
- գազը սպառել հաշվառքի սարքի շրջանցմամբ,
- խախտել գազատարների և գազասարքավորումների պահպանման գոտիները,
- ինքնակամ միացումներ կատարել գազամատակարարման ցանցին, գազն օգտագործել գազօգտագործող սարքավորման տեխնիկական փաստաթղթով (անձնագրով) չնախատեսված նպատակներով:

Գազամատակարարման ընդհատման կամ դադարեցման դեպքերում բաժանորդը պարտավոր է փակել գազասպառման համակարգի գազօգտագործող բոլոր սարքավորումների փականները:

Կենցաղային գազօգտագործող սարքավորման պարբերական տեխնիկական սպասարկումը երաշխիքային ժամկետում կարող է իրականացվել երաշխիք տրամադրած կազմակերպության կողմից:

Գազ օգտագործողը պետք է հիշի, որ արգելվում է

- ✓ Գազի ջրատաքացուցիչներից օգտվելու ժամանակ փակել դռան ստորին մասի վանդակը կամ անցքը, որը ծառայում է գազի այրման համար անհրաժեշտ օդի ներհոսքի համար.
- ✓ Փակել օդափոխման ուղեգծերի(ուղիների) վանդակները.
- ✓ Կրակ օգտագործել գազատարներից և սարքերից գազի արտահոսքը հայտնաբերելու համար: Գազատարների միացման ամրության ստուգումը, ինչպես նաև շինություններում գազատարներից և սարքերից գազի արտահոսքի տեղերի հայտնաբերումը պետք է կատարվի օճառային էմուլսիայի կամ հատուկ սարքերի օգնությամբ.

- ✓ Գազի սարքավորման և գազի բալոնների օգտագործումը նախադպրոցական տարիքի երեխաների և այդ սարքերից ու կայանքից օգտվելու կանոնները չիմացող անձանց կողմից.
- ✓ Գազի սարքերից և ագրեգատներից օգտվել նրանց անսարքության, ինչպես նաև գազատարների, փականների և ավտոմատիկայի սարքերի անսարքության դեպքում.

Գազամատակարարման ընթացքում անվտանգության հուսալիության բարձրացման համար անհրաժեշտ է՝

- ✓ Գազի սարքավորման օգտագործման ժամանակ պատուհանների օդանցքները ու վերնափեղկերը պետք է բաց լինեն,
- ✓ Անընդհատ օդափոխել այն շինությունները, որտեղ տեղադրվում են գազի սարքավորումները,
- ✓ Սպառողները գազի մատակարարման դադարեցման դեպքում գազի վառարանների, սալիկների և այլ սարքերի հրածորանների ծորակները պետք է անմիջապես փակեն.

Բնագավառում իրականացված ուսումնասիրությունները վեր են հանել գազի անվտանգության վերաբերյալ մի շարք կարևոր հարցեր, որոնք ներկայացվել են պատասխանատու կառույցների ուշադրությանը:

Հարցերը հնչել են գազօգտագործողների, հասարակական կառույցների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների կողմից:

11 կարևոր հարց գազի անվտանգության թեմայով

1 Գազասարքավորումների ներմուծումն ի՞նչ չափով է վերահսկվում պետության կողմից, անվտանգության տեսակետից ո՞րն է համարվում նորմալ գազասարքավորում, և ո՞վ է պատասխանատվություն կրում պիտանի գազասարքերի վաճառքի հարցում

2 Ո՞վ պետք է իրականացնի ծխաօդատար ուղիների մաքրման աշխատանքները և ով է դրա համար պատասխանատու:

3 Եթե բնակարանում նոր գազասարք են տեղադրում, գազամատակարար ընկերությունից պետք է գան համաձայնություն տան, ստուգեն օդատար ուղիները, թե ոչ

4 Ինչու՞ վճարել ներտնային տեխնիկական սպասարկման վճար, եթե տարիներով ոչ մի աշխատանք չի կատարվում, իսկ այդ դեպքում մատակարարն իրավունք ունի՞ գազազրկել, ի՞նչպես վարվել եթե կատարվում գազի անջատում

5 Ի՞նչ ծառայություններ են մտնում ներտնային տեխնիկական սպասարկման մեջ և ինչպիսի՞ վերահսկողություն է իրականացնում «ՀայՌուսգազարդ»-ը իր ներտնային տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի կատարած աշխատանքների որակի ուղղությամբ

6 Ինչպե՞ս վարվել, եթե ուզում ես գազասպառման կետ ավելացնել

7 Ինչու՞ են բույլատրում վաճառել անվտանգության առումով ոչ պիտանի գազասարքեր

8 Ինչու՞ գազ անցկացնելու ժամանակ խողովակները անխտիր տրամադրվում են ընկերության կողմից և այդպիսի բարձր գնով: Չէ՞ որ կարելի է օգտագործել ուրիշ խողովակ ավելի էժան կամ թողնել նույն հին խողովակները:

9 Ի՞նչու ներտնային տեխնիկական սպասարկումը կատարում է **«ՀայՌուսԳազարդ»ՓԲԸ** այլ ոչ ուրիշ կազմակերպություն: Ի՞նչու սպառողին պարտավորեցնում են պայմանագիր կնքել, եթե դա հակասում է ՀՀ սահմանադրությանը:

10 Ի՞նչ հաշվարկով է պայմանավորված ներտնային սպասարկման համար սահմանված գումարի չափը:

11 Եթե վերականգնվում է գազամատակարարումը տեղեկացվու՞մ են արդյոք այդ մասին սպառողները:

ՄԱՏԱԿԱՐԱՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՅՌՈՒՍԳԱԶԱՐԴ» ՓԲԸ

Ինչպես պետք է մատակարարը ապահովի սպառողի անվտանգությունը

Գազամատակարարման աշխատանքների ճիշտ կազմակերպումը և իրականացումը, սպառողների հետ աշխատանքը, իրազեկումը բնական գազի անվտանգության կանոններին և բնականաբար ներտնային գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման աշխատանքների որակը բերում են վթարների կանխարգելմանը: Եվ այս ամենը ամրագրված է ընկերությանը տրված բնական գազի բաշխման լիցենզավորված գործունեություն իրականացնելու պայմաններում: Նշված աշխատանքների գրավականն է անվտանգ

գազամատակարարումը, իսկ ինչպես պետք է կազմակերպի և ինչ աշխատանքներ է պարտավոր կատարել ընկերությունը. իսկ այդ աշխատանքները սահմանված են գազամատակարարման և գազօգտագործման կանոններով (ԳՄՕԿ) :

«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ն գազամատակարարման անվտանգության հուսալիությունը ապահովելու համար պարտավոր է կատարել ԳՄՕԿ-ով սահմանված հետևյալ գործառույթները.

2005թ. հոկտեմբերի 4-ին ՀԾԿՀ-ն իր 139Ա որոշմամբ համաձայնություն է տվել «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ կողմից ներկայացված «Բնակիչների ներտնային և բազմաբնակարան շենքերում գտնվող կազմակերպությունների գազասպառման համակարգերի տեխնիկական սպասարկման աշխատանքներ իրականացնող կազմակերպության ընտրության» չափորոշիչներին, որոնք ըստ վերոգրյալ որոշման հետևյալն են՝

1. Աշխատանքային տարածքի (սեփական կամ վարձակալած), նյութատեխնիկական բազայի, շուրջօրյա կամ «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության և «1-04» վթարակարգավարական ծառայության միջև համապատասխան պայմանագրի ղեպքում ժամը 9^{00}-ից մինչև 18^{00}-ը ներքապահությամբ հեռախոսային կապի առկայություն.
2. Մատակարարի ներքին իրավական ակտերին համապատասխան, 3 տարվա աշխատանքային փորձ ունեցող տեխնիկական ղեկավարի և մասնագիտական ուսուցում անցած՝ գիտելիքների ստուգման վկայական ունեցող անձնակազմի առկայություն.
3. Կազմակերպության կանոնադրության և իրավաբանական անձի պետական գրանցման վկայականի առկայություն.
4. Տեխնիկական սպասարկման աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների հագեցվածություն (արտահագուստ, գործիքներ, քսայուղեր և անհատական պաշտպանության միջոցներ).
5. Առնվազն 2 մլն դրամ կանոնադրական կապիտալի առկայություն:

ԷՅ-Ի-ՋԻ ՍԵՐՎԻՍ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄՈՒՏՔԸ
ԳԱԶԱՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Վերը շարադրվածը թույլ է տալիս եզրակացնել, թե ինչպիսի պատասխանատվություն է իրենից ներկայացնում գազի բնագավառի ծառայությունների մատուցումը:

ԵՎ, ահա, այսպիսի իրավիճակում, գազի սպասարկման ոլորտում ծառայություններ է սկսում մատուցել «Էյ-Ի-Ջի-Սերվիս» ՍՊԸ-ն:

«Էյ-Ի-Ջի-Սերվիս» ՍՊԸ-ն ստեղծվել է 03.05.2007թ.: Համաձայն «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ հետ կնքված 02.06.2007թ. հանձնարարության պայմանագրի ընկերությունն իրականացնում է բնակչության (ավելի քան 575000 բաժանորդ), ինչպես նաև արտադրական ձեռնարկությունների (ավելի քան 3400 կազմակերպություն) գազասպառման կենցաղային և արտադրական համակարգերի տեխնիկական սպասարկման և վերանորոգման աշխատանքներ:

Ընկերությունը զբաղվում է կենցաղային գազասպառման համակարգերի և սարքավորումների, ինչպես նաև դրանց հավաքակցման հանգույցների և դետալների իրացմամբ:

«Էյ-Ի-Ջի-Սերվիս» ՍՊԸ-ն համալրված է ծխաօդատար ուղիների դիագնոստիկայի և մաքրման ժամանակակից արտասահմանյան սարքերով և սարքավորումներով:

Հաշվի առնելով արդի տեխնիկական զարգացման արագ տեմպը՝ սպասարկող անձնակազմը պարբերաբար անցնում է ատեստավորում, իսկ անհրաժեշտության դեպքում՝ վերապատրաստման դասընթացներ:

Ընկերությունում աշխատում են ավելի քան 800 մասնագետներ, որոնցից՝
- ինժեներատեխնիկական անձնակազմ՝ 281 մասնագետ;
- սպասարկող անձնակազմ՝ 490 մասնագետ:

«Էյ-Ի-Ջի-Սերվիս» ՍՊԸ-ի հիմնական նպատակն է բնական գազ սպառողների սարքերի և սարքավորումների որակյալ և ժամանակին սպասարկում, որը կբարձրացնի նրանց անվտանգությունը, ինչպես նաև կնվազեցնի շրջակա միջավայրի աղտոտվածությունը:

Ընկերությունը գործում է ՀՀ ողջ տարածքում և ունի 17 ռեգիոնալ և 44 տարածքային ծառայություն, որոնք սպասարկում են 575 հազարից ավելի բաժանորդների և 3400 կազմակերպություն ու ձեռնարկություն:

Ընկերության առաքելությունն է.

Իրականացնել գազասպառիչ համակարգերի ժամանակին և որակյալ սպասարկում հօգուտ դրանց հուսալիության և անվտանգության բարձրացման:

2007 թվականի հուլիսի 2-ից Երևանում, Շիրակի և Լոռու մարզերում և Գյումրի քաղաքում, իսկ օգոստոսի 1-ից Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում գազասպառման ներտնային համակարգերի սպասարկումն իրականացնելու պարտավորությունը «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի և «ԷՅ-Ի-ՋԻ-սերվիս» ՍՊԸ-ի 2007 թվականի հուլիսի 2-ին կնքված հանձնարարության պայմանագրի հիման վրա իրականացվել է «ԷՅ-Ի-ՋԻ-սերվիս» ՍՊԸ-ի մասնագետների կողմից:

«ԷՅ-Ի-ՋԻ-սերվիս» ընկերությունը ընտրվել է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006թ N139 որոշմամբ սահմանված չափորոշիչներին համապատասխան: Դրանք են.

1. Աշխատանքային տարածքի (սեփական կամ վարձակալած), նյութատեխնիկական բազայի, շուրջօրյա կամ «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության և «1-04» վթարակարգավարական ծառայության միջև համապատասխան պայմանագրի դեպքում ժամը 900-ից մինչև 1800-ը հերթապահությամբ հեռախոսային կապի առկայություն.
2. Մատակարարի ներքին իրավական ակտերին համապատասխան, 3 տարվա աշխատանքային փորձ ունեցող տեխնիկական ղեկավարի և մասնագիտական ուսուցում անցած՝ գիտելիքների ստուգման վկայական ունեցող անձնակազմի առկայություն.
3. Կազմակերպության կանոնադրության և իրավաբանական անձի պետական գրանցման վկայականի առկայություն.
4. Տեխնիկական սպասարկման աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների հագեցվածություն (արտահագուստ, գործիքներ, քսայուղեր և անհատական պաշտպանության միջոցներ).
5. Առնվազն 2 մլն դրամ կանոնադրական կապիտալի առկայություն: Հանձնարարության պայմանագրի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ «ԷՅ-ԻՋԻ-սերվիս» ՍՊԸ-ի համար պայմանագրով սահմանված պարտավորությունները ընդգրկում են «Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոններով» և «Ներտնային գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման համաձայնագրով» սահմանված պահանջները: Նշենք, որ պայմանագրով սահմանված է սպասարկման աշխատանքների դիմաց վճարման մեխանիզմ, որի համաձայն «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ն վճարում է «ԷՅ-Ի-ՋԻ-սերվիս» ՍՊԸ-ին, վերջինիս կողմից ներկայացված ամենամսյա հաշվետվության հիման վրա՝ ըստ բաժանորդների մոտ փաստացի կատարված այցերի քանակի: Ընդ որում, «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ն ընտրանքային կարգով իրականացվող այցերի միջոցով ստուգում է «ԷՅ-Ի-ՋԻ-սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած կատարողականը սպասարկման ծավալների մասին:

Պայմանագրով սահմանված է նաև սպասարկողի կատարած աշխատանքների ծավալը և կատարման որակը «ՀայՌուսգազարգ» ՓԲԸ-ի կողմից ուսումնասիրելու (վերահսկելու) իրավունքը: 2007 թվականի ընթացքում «ՀայՌուսգազարգ» ՓԲԸ-ի գլխավոր ճարտարագետի հրամանով իրականացվել է «ԷՅ-Ի-ՋԻ-սերվիս» ՍՊԸ-ի կողմից սպասարկման աշխատանքների կազմակերպման ուսումնասիրություն, սակայն աշխատանքային խմբի կարծիքով նման ուսումնասիրությունները պետք է լինեն շարունակական և անհրաժեշտ է մշակել սպասարկման աշխատանքների ծավալի և դրանց կատարման որակի նկատմամբ վերահսկման գործուն մեխանիզմ՝ սահմանելով ուսումնասիրությունների ծավալները և պարբերականությունը:

«ԷՅ-Ի-ՋԻ-սերվիս» ՍՊԸ-ի մասնագետների կողմից գազասպառման ներտնային համակարգերի սպասարկման աշխատանքներն իրականացվում են ընկերության տնօրենի և գլխավոր ճարտարագետի կողմից հաստատված կանոնակարգերի, ընթացակարգերի և հրահանգների հիման վրա: Դրանք մշակված են «Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնների», «Կենցաղային սպառման համար բնական գազի մատակարարման պայմանագրին» հավելված «Ներտնային գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման համաձայնագրի» և «ՀայՌուսգազարգ» ՓԲԸ-ի «Բնակելի տների և օբյեկտների գազասպառման կենցաղային համակարգերի տեխնիկական սպասարկում» կազմակերպության ստանդարտով սահմանված պահանջների հիման վրա և սահմանում են ընկերության ստորաբաժանումների (տարածքային ծառայությունների) ղեկավարների և մասնագետների գործառույթները: Մասնավորապես, «ԷՅ-Ի-ՋԻ-սերվիս» ՍՊԸ-ի տնօրենի կողմից 2007 թվականի հուլիսի 23-ին հաստատվել են տարածքային ծառայության կանոնակարգը, տարածքային ծառայության պետի, պետի տեղակալի, տեղամասի վարպետի և փականագործի պաշտոնեական հրահանգները:

2007 թվականի ընթացքում սպասարկման աշխատանքները իրականացվել են «ՀայՌուսգազարգ» ՓԲԸ-ի կազմած ժամանակացույցի համաձայն՝ ընդհուպ մինչև յուրաքանչյուր փականագործի համար անհատական: Կատարված այցերի վերաբերյալ յուրաքանչյուր փականագործի հաշվետվության հիման վրա, հաջորդ ամսվա ժամանակացույց-հանձնարարականում ներառվում են այն բնակարանները, որտեղ տարբեր պատճառներով (հիմնականում փակ դռներ) չի կատարվել սպասարկման աշխատանքները:
2007 թվականի ընթացքում բնակիչ-բաժանորդների բնակարաններ կատարված այցերի վերաբերյալ «ՀայՌուսգազարգ» ՓԲԸ-ն ՀՃԿՀ է ներկայացրել տեղեկանք:
Համաձայն որի..

2007 թվականի համար 501140 բաժանորդների մոտ առնվազն 1 002 280 այցի փոխարեն կատարվել է 887164 այց կամ 88.5%-ը, որից 468122 այց կամ 52.77 %-ը հունվար-հուլիս ամիսներին կատարել են «ՀայՌուսգազարգ» ՓԲԸ-ի աշխատակիցները, իսկ 419042 այց, կամ 47.33 %-ը օգոստոս-դեկտեմբեր ամիսներին կատարել են «ԷՅ-Ի-ՋԻ-սերվիս» ՍՊԸ-ի աշխատակիցները:

2008 թվականի համար «ԷՅ-Ի-ՋԻ-սերվիս» ՍՊԸ-ի կազմած ժամանակացույցը նախատեսում է 516 272 բաժանորդի մոտ կատարել 1 135 719 այց: 2008 թվականի 3 ամիսների ընթացքում, ըստ «ՀայՌուսգազարգ» ՓԲԸ-ի ներկայացրած տեղեկատվության «ԷՅ-Ի-ՋԻ-սերվիս» ՍՊԸ-ի մասնագետները կատարել են 232188 այց կամ առաջին եռամսյակի համար պլանավորված 270959 այցերի 85.7 %-ը:

Հանձնարարության պայմանագրի 3.4.1 կետի համաձայն «ԷՅ-Ի-ՋԻ-սերվիս» ՍՊԸ-ն իրավունք ունի ինքնուրույն որոշել պայմանագրով սահմանված պարտավորությունները կատարելու համար անհրաժեշտ մասնագետների քանակը: Ընկերության մեկ փականագործը սպասարկում է միջինը 1320 բաժանորդ:

Հանձնարարության պայմանագրի 3.3.4 կետի համաձայն «ԷՅ-Ի-ՋԻ-սերվիս» ՍՊԸ-ն ստանձնել է գազօգտագործող սարքավորումների միացման ճշտության վերահսկողության և այդ մասին համապատասխան ակտ կազմելու գործառույթը:

Ակտերը կազմում են ընկերության փականագործները բնակիչ-բաժանորդների բնակարանները կատարվող այցերի ընթացքում՝ «ՀայՌուսգազարգ» ՓԲԸ-ի տեխնիկական տնօրենի կողմից հաստատված ղասակարգչի հիման վրա: 2007 թվականի ընթացքում, ըստ «ԷՅ-Ի-ՋԻ-սերվիս» ՍՊԸ-ի տեղեկատվության հայտնաբերված խախտումների վերաբերյալ կազմվել է թվով 70956 ակտ: 2008 թվականի փետրվարի 1-ի դրությամբ այդ թիվը կազմել է 93936-ը: Հավելված № 5 Կազմված ակտերի 25%-ը վերաբերում է գազասարքերի ինքնակամ տեղադրման դեպքերին, 20%-ը՝ նախագծից շեղման կամ սարքի բացակայության դեպքերին, 14 %-ը՝ գազասարքերը եռաբաշխիչով միացնելու դեպքերին: Աշխատանքային խումբն ընտրանքային կարգով ուսումնասիրել է փականագործների կազմած «Գազասպառման կենցաղային համակարգում խախտումների վերացման կամ գազամատակարարման ընդհատման ակտերը», դրանցով արձանագրված խախտումների մոտ 70%-ը վերաբերում է այնպիսի թերություններին (խախտումներին), որոնց վերացումը չի
պահանջում բարձր մասնագիտական հմտություններ կամ զորման սարքավորում:

Դրանք կարող են վերացվել տեղում՝ այց կատարող փականագործի ուժերով: Սակայն, գործող կարգի համաձայն խախտման ակտերը ներկայացվում են «ՀայՌուսգազարգ» ՓԲԸ-ի համապատասխան մասնաճյուղ: Վերջինս դրանք կրկին

դասակարգում է ըստ խախտմանը արձագանքելու հրատապության և անմիջապես անդրադառնում է միայն այն ակտերին, որոնք պահանջում են գազազրկել բաժանորդներին կամ ապամոնտաժել անօրինական տեղադրված գազասարքը: Ակտերի մի մասն էլ վերադարձվում է կազմողին՝ որպես չհիմնավորված: Նման կարգը բերում է նրան, որ ԳԳՄ-ներում կուտակվում են բազմաթիվ ակտեր, որոնցում արձանագրված խախտումների վերացումը անբույլատրելի ձգձգվում է: Ուսումնասիրությունների ընթացքում «ՀայՌուսգազարգ» ՓԲԸ-ի և «ԷՅ-Ի-ՋԻ-սերվիս» ՍՊԸ-ի մասնագետների հետ քննարկումների արդյունքում վերջիններիս ուղադրությունն է հրավիրվել խախտումների դասակարգչի, ինչպես նաև խախտումների վերաբերյալ ակտերի կազմման և արձանագրված խախտումների վերացման կարգի լրամշակման անհրաժեշտության վրա:

«ԷՅ-Ի-ՋԻ-սերվիս» ՍՊԸ-ի տեխնիկական ղեկավարի հրամանով հաստատվել է փականագործի հրահանգավորման թերթիկ, որում ներառված պահանջները սպասարկման աշխատանքների ծավալների վերաբերյալ հիմք են հանդիսանում փականագործների ուսուցման և հրահանգավորման համար: Նշենք, որ հրահանգավորման թերթիկը մասնագիտական կարողությունների վերաբերյալ պահանջներին զուգահեռ սահմանում է նաև վարվեցողության կանոնները, որոնք փականագործը պետք է պահպանի բնակիչ-բաժանորդների մոտ կատարվող այցերի ընթացքում: Փականագործների հրահանգավորումը և գիտելիքների ստուգումը ձևակերպվում է հատուկ հրահանգավորման մատյաններում՝ հրահանգավորողի և փականագործի ստորագրություններով: Պետք է նշել, որ ըստ հրահանգավորման մատյաններում առկա գրառումների, ցանկացած հրահանգավորում իրականացվում է փականագործին ներկայացվող պահանջների ամբողջ ծավալով, ինչը չի կարող լինել արդյունավետ: Մեր կարծիքով անհրաժեշտ է հրահանգավորման թերթիկի ամեն կետի պահանջի վերաբերյալ հրահանգավորել առանձին:

Փականագործների և վարպետների հետ աշխատանքային խմբի անցկացրած զրույցները և սպասարկման աշխատանքների իրականացման վերաբերյալ նրանց գիտելիքները և հմտությունները բացահայտող վարժանքների արդյունքները ցույց տվեցին, որ հրահանգների դրույթների վերաբերյալ փականագործների գիտելիքները և բաժանորդներին հրահանգավորելու հմտությունները դեռևս բավարար չեն:

Ներտնային գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման համաձայնագրի 1.1 կետի ե) ենթակետի՝ ծխատար ուղիների զննում և անհրաժեշտության դեպքում մաքրում, պահանջի կատարումը 2007 թվականի ընթացքում իրականացնվել է հիմնականանում «Հայաստանի հրշեջ անվտանգության մասնագիտացված ծառայություններ» իրավաբանական անձանց միության անդամ ընկերությունների միջոցով,

որոնց հետ կնքված են համապատասխան ծառայությունները մատուցելու պայմանագրեր: Այդ ընկերությունների կողմից 2007 թվականին կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկանքը բերված են ՀԾԿՀ կայքում: Ներկայումս, «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի և «ԷՅ-Ի-ՋԻ-սերվիս» ՍՊԸ-ի մասնագետների կողմից մշակվում է «Ծխատար ուղիների զննման և մաքրման աշխատանքների իրականացման հրահանգը» և կազմակերպել է ծխնելույզագործների ուսուցում, ինչը հնարավորություն կտա հետագայում սեփական ուժերով իրականացնել նշված կետի պահանջը:

«ԷՅ-Ի-ՋԻ-սերվիս» ՍՊԸ-ի Երևանի տարածքային ծառայությունում փականագործների կողմից այցերի ընթացքում հայտնաբերված թերությունները անընդհատ վերացվում են և ծխաօդատարները մաքրվում են ծառայության ծխնելույզագործների ուժերով:

Ընկերության խնդիրներից է որակյալ մասնագետների պատրաստման խնդիրը: Այդ խնդիրն ակնառու է առավելագույնս մարզերում:

Ընկերության կարևորագույն խնդիրներից մեկը՝ ընկերության նկատմամբ սպառողների վստահության բարձրացումն է:

Նախատեսվում է այդ հարցը լուծել վստահության հարցումների միջոցով: